



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

05 նոյեմբերի 2012 թվականի N 446-Ա

ք. Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Համաձայն <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 26-ի N 844-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 3-րդ և 5-րդ կետերը՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) *Մարգարե Գարեգինյան* - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար,

2) *Վաչագան Թադևոսյան* - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ,

3) *Լևոն Պետրոսյան* - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ,

4) *Վահագն Նազրյան* - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ,

5) *Իրինա Մկրտչյան* - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի պետ:

2. Հանձնաժողովի նախագահ նշանակել՝ *Մ. Գարեգինյանին*, քարտուղար՝ *Վ. Նազրյանին*:

3. Հանձնաժողովին՝ ղեկավարվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 26-ի <<Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովների ձևավորման, գործունեության կարգը և նրանց գործառույթները սահմանելու մասին>> N 844-Ն որոշմամբ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ